

در عليه ده بفتحه قوسنده طاش خانده
نومن وده « زاغيك » غزنهسي مديري
پلاقالشيان حونان

S'adresser à
HOVNAN PALACACHIAN

Directeur du journal arménien « Dzaghik »,
Rue Bahtché-Kapou, Tach Han, 50
CONSTANTINOPLE

բաժանորդագիր կԱՆԻՒԿԻ ԹԱՐՅԻԿ Համար
առարեկան ՏՕ զը, Ռուսիոյ համար Տ բորլի,
որի Երկիրներու համար 10 ֆր:

Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրու-
թիւնք եւս կընդունուին:

Գատանսերէն Օսմանիան նամակադրոշմ
կընդունուի՝ 1 զը. նոցը 34 փարայի հաշ-
ով, կամ 100 զը. զի փոխարէն 115 զը:
ՄԱՂԻԿԻ վերաբերեալ ամէն գործի համար
դիմել:

ՍԱ. Տնօրին-Հրատարակիչ
ՅՈՎԱՆԻՆ Դ. ՓԱԼԱՎԱՐԾԱՆ
Պալիս, Պահէ-Դարու, Թաշ Խան, թիւ 50

40 Փարա

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 Փարա

ՆՈՐ ԵՐԱՎԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻՒ 37

ՇԱԲԱԹ

27 ՅՈՒՆԻՍ 1892

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ
դաս մ'եւս ունիմք տալ Պ. Գրիգոր
Մարգարեանի՝ «Մաղիկի յառաջի-
կայ թուով, իւր վերջին պատասխա-
նին առթիւ զոր շարթուս հրատա-
րակեց «Ճէրիտէի Շարգիյէ»ի մէջ:

«Մաղիկի»ի ներկայ թուով հրա-
տարակուած է միայն շարունակու-
թիւնն՝ Մարգարեան Աշխարհագրու-
թեան ընդարձակագոյն իրԱԿԱՆ
ՍԽԱԼԱՑՈՒՑՈՒԿԻՆ, գրեալ ի Պիպէո-
ճեան Առաքել է փէնտիէ:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ Ք(1)

Ե.

Գէորգ ՊԱՏՈՒԵԼԻ ՊԱԼԱՏԵՅԻ

Մեծանուն Պալատեցին՝ ուրիշ գը-
րական գործեր ևս ունեցած է, տաս-
նոտեան հատընտիր քերթուածներ
յօրինած ու ոգած է, բայց ասոնցմէ
հետեւեալ քառատող բանաստեղծու-
թիւնը միայն ունիմք առձեռն, Պարսկա-
հայ Բառարանին ճակատն արձանացու-
ցեալ, իրեւ նախադուռ նոյն հսկայ
հեղինակութեան.

Ա Սեւաներկեալ ի սպիտակին՝ թող
մնացէ այդ գրոշուած,

Իսկ առ վաղիւ մատենագրիդ՝ քա՛ւ
թէ բնաւ յոյս մնաց.

Ես չդիտեմ՝ ո՛վ ընթերցցի զգե-
նոյդ մնացուած,
Հաւանիմ. այս անցուշտ է՝ յա-
ւէժ մնայ իմ գրուած:

Ազարանգելոս, որ պատմագիր է
չորրորդ գարու, չորս անգամ տպուած
է՝ 1770 (2)ի ապագրութենէն զատ:

(1) «Մաղիկ»ի 35 և 36 թիւերէն շա-
րունակութիւն և վերջ:

(2) Ագաթանգեղոսի առաջին տպա-
գրութիւնը 1709ին էջմիածնայ նուրի:

ԾԱՌԻԿ

Լ Ր Ա Գ Ւ Թ

1709ին Ագաթանգեղոսը տպուած
էր արդէն ի Պօլիս:

Գէորգ-Դավիր՝ ընտրելագոյն հնա-
գիր գաղափարին հետ բաղդատելով
զայն, ընդօրինակողաց անհմտութենէն
և տպագրողաց անզգուշութենէն
սպրդած վրիպակներն ու այլայլու-
թիւնները կը ճշդէ ու կը մաքրէ, և
1770ին նորոգ տպագրութեամբ կը հրա-
տարակէ հետեւեալ յիշատակարտնաւ.

«Գիրքս այս որ կոչի Ագաթանգե-
լոս, ի բազում պղտորեալ և մթացեալ
իմացուածոցն իւրոց՝ պայծառացաւ, և
ի շար պակասութեանց և թերութեան-
ցըն զերծեալ՝ լրացաւ, և իրեւ միջո-
րեայ լրւաւորեալ՝ փայլեցաւ. և գե-
ղեցկացեալ, բազմաց հեշտընկալ և հաս-
կանալի եղեւ, և այս եղեւ մեղուա-
ջան աշխատութեամբ ուրումն Գէոր-
գայ Դավիրի կոստանդնուպօլսեցոյ, հա-
յելով ի ճեռագիր օրինակ ինչ վաղեմի՝
որ թէ պէտ չունէր յայտնի ցոյց ամի
գրչութեան իւրոց թուականու նշա-
նակեալ, սակայն որպէս ցուցանէր՝
արդեամբ յոյժ ընտիր էր: Յորոյ վերայ
գուն գործեալ ջան եղ, փոխադրեաց

րակ Աղաւնի Աստուածատուր վարդա-
պէտ ընկել տուած է, ի Հայրապետու-
թեան Աղէքսանդր Կաթողիկոսի:

Պարոն Գալուստ, որդի Խօօնայ Մու-
րատի Ագուլեցոյ Գողթնեաց՝ յանձն
աւած է Ագաթանգելու տպագրութեան
ծախքն՝ վլերոյիշեալ նուիրակին ձեռամբ
յլել ի կ. Պօլիս, առ տպագրատեատ
Գրիգոր-Դավիրն:

Տպագրութիւնը մը ևս 1824ին յօր-
թագիւղ ի տպարանի Պօլոսի Արտակեան
եղած է:

1835ին, Վենետիկոյ Միլիթարեան
Հարք՝ եօթն օրինակաց վրային գաղա-
փարելով տպեցին:

Վերջին տպագրութիւնն եղած է՝
1862ին ի Վենետիկի:

Ագաթանգեղոսի գրչագիր ընտիր
օրինակներ նկատուած են էջմիածնայ և
երուսաղիմայ մատենագրաբանաց մէջ
գտնուածներն, ինչպէս նաև ի Գերջան
և յԱմիթ գտնուածները:

զնոյն անպակաս աստ ի տպեալս, և
չակերտիւք և այլ զինչ և իցէ նշանա-
խեցիւք՝ դրոշմեաց յէջսն և ի լու-
սանցան. ի քաղաքի արքայականի Բիւ-
զանդիսնի. յամի տեառն 1770, ի գար-
նան եղանակի: Իսկ զգրչեայ օրինակն
գծեալ էր փորձ գրիչն յԱմիթ քաղաքի:

* *

Գիրք պարապմանց՝ Մրբոյն Կիւրդի
եպիկոպոսի Աղէքսանդրու հայրապե-
տի, յաղաքս մարդանալոյ Միածնին,
որ անդրադարձաւ է ի յունականէն ի
հայ բարբառ՝ Գէորգ-Դավիրն, և հրա-
մանաւ Սրբազն Պատրիարքի Տեառն
Յակոբայ Աստուածաբան վարդապետի՝
տպուած ի կ. Պօլիս, ի թուին Հայոց
1209, գիտք. 10:

Սրբոյն Կիւրդի այս գրուածին հետ՝
երանելոյն Յովիաննու Ուկերեան հայ-
րապետի երեք ճառերն նաև՝ թարգ-
մանութեամբ Տէր Յովիաննիսեան Դըու-
րի՝ տպագրուած են հետեւեալ յիշա-
տակարանու.

«Ողորմութեամբն Աստուածոյ թարգ-
մանեցեալ եղեն ճառքս յումեմնէ բա-
նասիրէ ընդ հովանեաւ տուրք Հրեշտա-
կապետ Եկեղեցւոյն ի փառս Աստու-
ծոյ»:

* *

Դրախտ ցանկալի գրքին մէջ ալ հէ-
տեւեալ ծանօթութիւնները կը կար-
դամք:

«Գիրք աստուածաբանականն որ կո-
չի Դավիտ ցանկալի, շարադրեալ ի Հա-
յուրու Աստուածաբան վարդապետէ
ծահկեցւոյ, ի փառս որբոյ էջմիածնի»:
Յէջն 702. «Եւ գիտելի է, զի Տէր
Յակոբ ամենիմաստ վարդապետին աս-
տուածաբան, աշակերտ Յօհաննու մե-
ծի պատրիարքին կոստանդնուպոլսոյ,
արար զգիրս աստուածաբանականն որ
կոչի Վէմ Հաւատոյ, զանտղան առար-
կութեամբ և բազմահոյլ վկայիւք ընդ-
դէմ երկարնակաց: Եւ ընդ շարս աս-
տուածաբանից կարգեցաք, թէ կամէտ

* *

յաստ եղաւ։ Որոյ պատճառ է, զի ի յարմարիլ գրքոյս՝ դեռ չէր աւարտեալ զշենակ մատեանս իւր։ յաղացս որոյ գրեցաւ աստ, զի հաշուեսցի ի կարգս գրեցելոցն առաջնոց։ Յիշատակարանն աւ կը յաւելու։ ։ Տպեցաւ։ արդեամբք և ծախսւք սրբայն էջմիածնի, ի ՌՃՇԴ թուլին մերում, ի Կոստանդքնուալիս, ի տպարանի Մահանեսի Աստուածատրոյ։ Յիշենջիք զիաշնորհ աշակերտքն յարմարողի գրքոյս զտէր Յօհաննէս վարդապետն Ամասիացի, որ յառաջնոց օրինակէ սովին գաղափարեալ՝ եւ մեզ զայս առ ի տպել։ Եւ զկոստանդնուալումեցի տիրացու Գէորգըն, որ բազում և անդուլ աշխատութեամբ զհամարս վկայութեանց ժողովեալ՝ եդ ի լուսանցն»։

* * *

Գիրք որ կոչի Վէմ գայթակդուքեան։ Շարագրեցեալ յիլիայ Մինիդիասէ, եպիսկոպոսէ Ֆլավիութայն վիճակի, ի խնդրոյ ուրումն իշխանի, և թարգմանեցեալ ի Յունաց լեզուէ ի Հայս ի Կոստանդնուալոլիս, յումեմնէ բանասիրէ։

Այս Յունագէտ յումեմնէ բանասիրէն՝ կը կարծուի թէ Գէորգ-Դպիրն եղած լինի, 1767ին, ինչպէս նաև «Հայ և Տանկերէն պիրք Առակաց Սալօմզնի որդւոյ Դաւթի, որոյ իւրաքանչիւր երեսաց Հայերէն պարբերութեանցն հանդէս, ի գիւրիմանալի լինել փափաքողաց ուրին սակեղէն բանից, պարզապէս թարգմանութեամբ տաճկէվարըն՝ ի խնդրոյ տպագրողին» շարակարգով յումեմնէն, որ տպագրած է զայս գործ ի Կոստանդնուալոլիս, ի Քիւրքձինան, ի տպարանի Յովհաննէսեան Պօղոսի, 1806ին։

* * *

Գէորգ-Դպիր Երբայերէնի ներկուու հմտութեանը իբրեւ գրաւական՝ Սաղմոսն Երբայեցերէնէ թարգմանած է ի Հայ։

Եւ 1823ին Զամչեան Հ. Միքայէլի անուամբ հրատարակուած Սաղմոսաց մեկնութեան մէջ շատ մեծ աշխատութիւն ունի Յովհաննէսեան Պալատեցին, Երբայերէն բնագրին հետ զայն մանրակիտ բաղդատելուն համար։

Գէորգ-Դպիր Տ. Յովհաննէսեան այս և ասոնց նման տպեալ կարեւոր աշխատութիւններու հետ, ունի նաև Երգարան մը։

* * *

Գէորգ-Դպիր՝ ծերութեան հասակին անուամբ հաշխատանոցն էր Պալատու Եկեղեցւոյն խուցերէն մին՝ ուր առանձնացեալ կը բնակէր, և որ այժմ գաղաղապահ սենեկի վերածուած է։

Սնտիական հասակէն ցխոր ծերութիւն՝ գրական երկերով պարապած է, և ունի նաև հետեւեալ ձեռագիրները։

Յարգելի և լեզուագէտ Հայազգի ծերունոյ՝ մը մատենադարանին մէջ տեսայ Գէորգ-Դպիրի անտիպ ձեռագիրներէն կարեւոր գործ մը՝ Պատմութիւն Վէզիրներուն Օսմանցոց տէրութեան անունով։

Սոյն Երկն՝ մեծագիր եօթն պրակէ կը բազկանայ։

Գէորգ Պատուելին՝ Արաբերէն Բառագիրք մ'եւս ունի, յօրինեալ ըստ ոճոյ Պարակահայ Բառագրոյն, և որոյ ձեռագիրն՝ ինչպէս կ'իմանամք, ի Վենետիկ՝ Միլիթարեան Հարց քով կը դտնուի։

Սոյն Արաբերէն Բառարանին հետ, երկասիրած է նաև Արաբական Քերականութիւն մը՝ ըստ նոր (Եւրոպական) ոճոյ, և ոչ ըստ Տաճկաց հին դրութեան՝ որ կ'սկսի Նասարա, Նանուրով։

Սոյն Քերականութեան ձեռագիրն կը դտնուէ՝ ընդ մէջ այլոց, ի Դումդարու բնակեալ ականատոր տաճկագէտ ու բառագիտ համբաւեալ Մոլլա վերաձայնեալ Պօղոս Հօնայի ձեռագրոց մէջ։ Վակեմ Սերվիչէն ու Քերէստէճեան Պետրոս էֆէնաւիք, ինչպէս նաև հանգ-Գարբիէլեան Մ. Յովհաննէս էֆ. (Մըսթըր-Ճօն անուանեալ) և այլ աշակերտք Մոլլայի, սոյն Քերականութեան վրայէն ուսած են Արաբերէնը։

Նոյնպէս, Գէորգ Պատուել ոյն անունով՝ գեղեցիկ նախարանով գրուած գրաբառ լեզուաւ Քերականութիւն մը կը յիշուի, որ 120 տարուան հնութիւն մ'է, և որ կը դտնուի այժմ Մանզումէի Տէր և Խմբագրաւակեալ Մեծոյարգ Փունուեան Կարապետ էֆէնտիի քով։

Գէորգ-Դպիր երկասիրած է նաև Պարսկերէն Քերականութիւն մը, և Համառօտ Բառարան մը։

* * *

Յիւսկիւտառ՝ Ս. Խաչ Եկեղեցւոյ թանգարանին մէջ կը դտնուին Գէորգ-Դպիրի ձեռագիրներէն։

1. 1783ին ի Հելլէնականէն գրաբար ճոխ և ընտիր լեզուաւ թարգմանած Սիմէօնի Մագիստրոսի ՅՈՒ.Պ.Պ.Յ. ԶՕՐՈՒԹԵԱՆՑ ԿԵՐԼԵՍ.Յ Երկն։

2. Աղափիտոս. (Յունարէնէ թարգմանութիւն)։

3. Պատմութիւն Տրովաղալի. (Յունարէնէ թարգմանութիւն)։

Ասոնցմէ զատ, սոյն թանգարանի 1817 թուականի կնիքը կրող ընտրելագոյն մի ձեռագիրն՝ ձեռնազնութիւն անուամբ, որ ձեռնահմայութիւն կը հասկցուի, ոմանք՝ Գէորգ-Դպիրի կը վերագրեն։ Սոյն Զեւնազնութիւնը՝ ըս-

կը զբնատողին մէջ « Բնական թարգմանեցեալ ի նոյնոյ հեղինակէ » կ'ըսէ, ու որոշ անուն չտար : Ունի խորհրդաւորուանդական վեց պատկերներ : Բաց աստի, սոյն մատեան բժշկական նորալուր ու ճշգեալ բառերու հանք մ'է : Բուժիկի կամ հուժակ կ'անուանէ : Միջամատը : Պանկիք կ'ըսէ՝ ափին, և Բլակ՝ ձեռաց ցցեալ մասերուն։

Գէորգ-Դպիր ունի Դիւցաբանութիւն մ'ալ ի Յունարէնէ թարգմանեալ։

Անշուշտ պատուելուոյն ծննդավայրն ու ասպնջավայրն եղող Պալատու եկեղեցւոյ թանգարանին մէջ—ուր Կ. Պոլոյ առման ականատես գտնուող ու նկարագիրն ընող Գաղտատացի Արաբահամ վարդապետին 1000 տող տաղաչափական պատմութիւնը մագաղաթեաց թղթի վրայ կը գտնուի, Քէֆելի Ս. Նեկողոս Եկեղեցւոյն պատմութեանը հետ — պիտի գտնուին Գէորգ-Դպիրին մեզ անծանօթ մնացած ուրիշ ձեռագիրներն ալ։

Մենք կարգաւ յիշեցինք, Գէորգ-Դպիրին յայտնի անունով մեզ ծանօթեղած տպեալ և անտիպ երկերն իսկ ուրիշ անուանց տակ հրատարակեալ աշխատասիրութեանց համար՝ հետեւեալ մասնակցութիւնները կը պատմըւին ժամանակակիցներէ վաւերացեալ, որոց պատասխանատուութիւնն՝ ի'րակամ անիրաւ, բնաւ չառանձնելով, կը հրատարակեմք իւր մանրամասնութեամբն, իբրեւ հետաքրքրական եւ ուսումնասիրական նիւթ՝ ապագայ քննական պատմութեան համար :

* * *

Մեծանուն սրբազն մատենագիր Կեսարացի Եւսեբիոսի(1) Քրոնիկոն կամ Կանոնի ժամանակաց երկասիրութեան Հայերէն անայլայլելի և ընտրելագոյն թարգմանութիւնը, զոր Յուն Հեղինակին սկզբնագիրի օրինակին վրայ Մովսէս-Խորենացին ըրածէ, ըստ համազգի բանասիրաց միահամուս կարծեաց, և որ մինչեւ անցեալ դարուն վերջերը անյայտ մնացած էր, Գէորգ-Դպիրի կը յաջողի զայտ գրական մեծ գործ ևս ձեռք կ'եւ հետեւեալ հետաքրքրաշարժ պարագային մէջ։

Յայտնի է թէ՝ Գէորգ-Դպիր, այլ և այլ հայրենագիտական և ուսումնասիրական ուղեւորութիւններ կ'ընէր ի Փոքր-Ասիա և ի Հայաբնական գրեթէ բոլոր հին և պատմական Մայրավանքերըն ու Դպրեվանքերն այցելած է, մա-

(1) Վենետիկոյ Միսիթարեաններէն Հ. Արաբահամ Վ. Ճարեան 1877ին հրատարակեց և Եւսեբիոսի Կեսարացւոյ պատմութիւն եկեղեցւոյ յեղեալ Ասորուոյն ի Հայ, պարզաբանեալ նոր թարգմանութիւն։

գաղաթեայ հինաւուրց գրչագիրներ և
բնագիրներ գաղափարելու հետազօտու-
թեամբ, և անյագարար բազում գրա-
կան գանձեր պաշարելով վերադար-
ցած է ի մայրաքաղաքս, և Վենետիկոց
գրկելով զայնս, ինչպէս կանխաւ լին-
ցինք, անոնց փոխարէն շարթէ շարթ-
կըռուրօներ ընդունած է:

Գէորգ-Դալիր մի անգամ ալ տարբեր
ուղեգծով կը ճանապարհորդէ, ու Շա-
մախի կ'երթայ: Անդ Հայու մը առւն
հիւր կը մնայ, ուր Մատրասու (1) ընտիր
գինի կը գտնուէր առատութեամբ: Հիւ-
րընկալն՝ զուղեւորն լաւ մը կերցնելէ
յետոյ, աղորիկ ժ'ալ կը գինովնէ և կը
հանգստացնէ պատրաստուած անկող-
նոյն մէջ:

Կէս գիշերին՝ Գէորգ-Դալիր ջուրի
սաստիկ մարմաջ մը կ'զգայ: Կ'ելն՝
ասդին անդին կ'իյնայ ջուր փնտուելու,
վերջապէս գուր մը կը գտնէ: Ի՞նչ տես-
նէ աղէկ, ո՞վ զարմանալեացս. գուրին
բերանը՝ իրեւեւ խուփ կամ կափարիչ
դրուեր է մագաղաթեայ հնութիւն մը:
Վեր կ'առնու զայն, կը խմէ ջուրը,
ճամբորդութեան համար քովը ունեցած
քասովը: Սակայն գուրին խաբախը
տեղը չդնէր, այլ հետաքրքրուելով՝
քովը կ'առնէ և անկողնոյն մօտ կը տա-
նի, կուակելով որ մագաղաթեայ հնու-
թիւնը՝ ինչ որ ալ լինի, կարեւորու-
թենէ զուրկ բան մը չիրնար լինիլ:

Եւ արդարեւ սոյն մագաղաթեայ
խուփն՝ Եւսեբիոսի Քրոնիկոնի բնագիրն
է եղէր: Սակ տեսնելուն պէս Պատուե-
լին, ուրախութենէն ալ քունը կը
փախցնէ, ժամէ ի ժամ այգանալուն
կ'սպասէ:

Աղօթարանը (արշալցո) հազիւթէ
բացուած, մի քանի ոսկի պարգեւ կը
ձգէ հիւրընկալին, ու ձին աշտանակե-
լով՝ եօլ-բէլան կ'ըլլայ դէպի Պօլիս
ուղղուելու տրամադրութեամբ, հետը
շալիկելով գուրին մագաղաթեայ թան-
կագին խուփը:

Յայտնի է բանասիրութեան թէ եւ-
սերեայ Քրոնիկոնի Յունարէն բնագիրն
կորսուած է և միայն անունը յիշուած
կը գտնուի մի քանի հին հեղինակու-
թեանց մէջ:

Վենետիկոյ միաբանութիւնն իմանա-
լով որ Գէորգ-Դալիր գտած է անոր
հայերէն թարգմանութիւնը (2), կը

(1) Մատրաս թէեւ Անգլիական
Հնդկաստանի ծովեղերեայ կարեւոր
քաղաքներէն մինէ, սակայն համանուն
գիւղ մ'ալ կայ նաև Սաղեանու Ս. Մտե-
փաննոսի Վանուց մօտերը: Այդ գիւղի
գինին կովկասու մէջ անուանի է, և կը
մրցի կախեթու համբաւաւոր գինին
հետ:

(2) Պեթերման երբ Պօլիս կ'ուգայ,
ողբացել Օտեանի ձեռամբ Մայր Վար-

ինդը զայն պատուելիէն և գնելով
կը հրաարակէ՝ լատիներէն թարգմա-
նութեամբ հանդերձ, աշխատասիրու-
թեամբ Աւգեւեան Հ. Մկրտիչ վարդա-
պետի, որ պատմական ծանօթութիւն-
ներ եւս կըյաւելու և տոլագրեալ գիր-
քը Բարիզու Ակադեմիային դրկելով, կը
գիտատուի մեծագումար պարգեւով:

Ի Գուրուչչմէ և ի Խասգիւղ Ամի-
րայական խնջոյքներէն ու իշխանավա-
յիւլ խրախճանաց հանդէսներէն ու այս
առթիւ դոյացած մտերմական մշակու-
թենէն յետոյ: Գէորգ-Դալիր ոգեւորուե-
լով, նոր ու փաստուր երկասիրութեան
մը կը ձեռնարկէ: Այս գրական դորձը
կը լինի՝ երկհամոր Հայոց պատմութիւն
մը, ազգային հին և պատմական վան-
քերէն բերած այլ և այլ գրական պա-
շարներէն օգտուած ու առաջնորդուած:

Այն ժամանակները՝ ազգային հեղի-
նակաց երկերը տպելու ու խրախուսե-
լու համար Աղայ Յովակիսոյ իզմիրլեա-
նի հաստատած Սահակ-Մեսրովզայ գը-
րականական մրցանակը չկար. բարե-
պաշտ Ամիրայիք էլին որ կը հոգային
մեծածախոս գրքերու տոլագրութեան
հոգը:

Ակնեցի մահտեսի Թերզեանց կամ
թերզոնց մահտեսի Արքահամ Ամիրայ
(Գարլաքեհեա), գիրք տպել տալու ա-
ռաքինութեան մէջ այնչափ յառաջա-
դիմած էր, որ մինչեւ իսկ իւր գոր-
ծառնութեան տեղն՝ Հասան Փաշա
խանին մէջ՝ իրեն սեպհական ընդար-
ձակ տպարան հաստատեր, և ի մէջ այ-
լոց, հետեւեալ հոգեւոր գրքերը տպել
տուած է:

1. — Մեկնութիւնն Սրբոյ Աւետա-
րանին որ ըստ Ղուկասու: Արարեալ
սուրբ վարդապետին իզնատիսի (2),
ի խնդրոյ տեառն Գրիգորիսի Հայոց
կաթողիկոսի:

2. — ՅԱԾԱԽՍՊԱՏՈՒՄ. Ասացեալ
Սրբոյ Հօրն Մերոյ երանելոյն Գրիգորի
Լուսաւորչին:

3. — ԶԳՈՆ. Արարեալ Սրբոյն Յա-
կոբայ երիցս երանեալ հայրապետին
Մծրին քաղաքի՝ ըստ խնդրոյ Սրբոյ
Հօրն Մերոյ Գրիգորի Լուսաւորչի, սա-
կըս մանկանց նորոյս Սիոնիսի:

4. — ՄԵԿՆՈՒԹԻՒՆԻՆ Սուրբ Աւե-
տարանին որ ըստ Մատթէսուի, արա-
րեալ ի Սրբոյն Ներսիսէ Շնորհալոյ
մինչեւ ի համարն 17 հինդերորդ գըլ-
խոյն. և անտի աւարտեալ յերանել-

Ժարանի Թանգարանին մէջ փնտուել
կուտայ Եւսեբիոսի Հայերէն բնագիրն,
կարծելով թէ՝ աւանդութեան մը հա-
մեմատ՝ անդ պահուած կը մնայ, բայց
տարարադդարար բացասական պատաս-
խան կ'ընդունի:

(2) Ի Շափիրին Վանաց:

Հայն Յովհաննու երզնկացւոյ՝ որ և կո-
չի Մործորեցի:

5. — ԷՆԴՀԱՆՐԱԿԱՆ Ներսէ Շնոր-
հալոյն: Տպագրեալ յար և նման հնա-
գոյն և ընտիր օրինակին, որ գրեալ էր
ի թուրին Հայոց ԶԾԱ.

6. — ԴՈՒԻԾԱ ԴՊՈՒԹՅԱՆ ՀԱՅ-
ԿԱԿԱՆ ԼԵԶՈՒԻ. — Այբենարան և Հե-
գերէն նոր և դիւրին ոճով:

7. — ԲԱՐՄԵԴ ՃՈՒՆ. Մեկնութիւն
յեւետարանն Մարկոսի:

Եւ այլ մատեանք:

Գէորգ-Դալիր ալ Ամիրայից գիրք
տպել տալու բարի սովորութիւնն ու
տրամադրեալ փառամիջութիւնն գըգ-
ուելու մոօք նոր երկասիրած պատմա-
կան վերսինեալ հսկայ գործը կ'առնու-
ի Գուրուչչմէ կը տանի, և Ուզուն
Յարութիւնն Ամիրային կը մատուցանէ,
որպէս զի այդ գրքին սատար և մեկե-
նաս կանդնի ու հրատարակութեան
տայ:

Գիրքը կը մնայ ընդ երկար Ամիրա-
յին տունը, ի պարտ ու պատշաճ տը-
նօրինութիւն:

Քանի մը տարի Ամիրային բնակա-
րանի սէլամլղը կենալէ ու սպասելէ
վերջը՝ այդ պատմական թանկագին
գործը, օրին մէկն յանկարծ կ'անյայ-
տանայ:

Շատ տարիներ չանցնիր, Զամչեան
Հ. Միքայէլի եռահատոր Հայոց պատ-
մութիւնն ի լոյս կ'ընծայուի Վենետիկոյ
տպարանն (1784ին):

Կը յիշեցնէին յէջմիածին թէ, Հ.
Զամչեանի Հայոց պատմութիւնն գեռ
նոր տպուած ու Մայր Աթոռ զրկուած
ատենները՝ էջմիածնայ մէջ ուսումնա-
սէր և հետաքնին միտրան վարդապետ
մը կար՝ ճգնաւոր Ահարօն անուամբ:
Կը կարդայ Զամչեան պատմութիւնը,
և կը զարմանայ թէ՝ Վենետիկոյ կղզոյն
մէջ առանձնացեալ միտրան մը՝ ինչպէս
կարու կը լինի այդ տատիճան ազգային
հարուստ տեղեկութիւններ ունենալ և
բազմակողմանի հայկական ծանօթու-
թիւններ մթերել՝ այլ և այլ վանուց մէջ
ինամովպահուած, զանազան ժամանա-
կի ճեռագիր կոնդակներէն: Ուստի
հետաքրքրուելով կ'ընդունի կը կղզոյն
մէջ առանձնացեալ միտրան մը՝ ինչպէս
կարու կը լինի այդ տատիճան ազգային
հարուստ տեղեկութիւններ ունենալ և
բազմակողմանի հայկական ծանօթու-
թիւններ մթերել՝ այլ և այլ վանուց մէջ
ինամովպահուած, զանազան ժամանա-
կի ճեռագիր կոնդակներէն: Ուստի
հետաքրքրուելով կ'ընդունի կը կղզոյն
մէջ առանձնացեալ միտրան մը՝ ինչպէս
կարու կը լինի այդ տատիճան ազգային
հարուստ տեղեկութիւններ ունենալ և
բազմակողմանի հայկական ծանօթու-
թիւններ մթերել՝ այլ և այլ վանուց մէջ
ինամովպահուած, զանազան ժամանա-
կի ճեռագիր կոնդակներէն:

Բազմակողմանի հայկական ծանօթու-
թիւններ մթերել՝ այլ և այլ վանուց մէջ
ինամովպահուած, զանազան ժամանա-
կի ճեռագիր կոնդակներէն: Ուստի
հետաքրքրուելով կ'ընդունի կը կղզոյն
մէջ առանձնացեալ միտրան մը՝ ինչպէս
կարու կը լինի այդ տատիճան ազգային
հարուստ տեղեկութիւններ ունենալ և
բազմակողմանի հայկական ծանօթու-
թիւններ մթերել՝ այլ և այլ վանուց մէջ
ինամովպահուած, զանազան ժամանա-
կի ճեռագիր կոնդակներէն: Ուստի
հետաքրքրուելով կ'ընդունի կը կղզոյն
մէջ առանձնացեալ միտրան մը՝ ինչպէս
կարու կը լինի այդ տատիճան ազգային
հարուստ տեղեկութիւններ ունենալ և
բազմակողմանի հայկական ծանօթու-
թիւններ մթերել՝ այլ և այլ վանուց մէջ
ինամովպահուած, զանազան ժամանա-
կի ճեռագիր կոնդակներէն:

Զամչեան Հայոց Պատմութեան եր-

կասիրութեան մասին այլոց կարծիքներըն ինչ որ ալ ինին, իմ գիտցածս սա՛է . Հ. Զամշեան ինքն անձամբ կարգ մը պատմական վանքեր այցելած և ձեռագիրներ հետազօտած ու պրատած է, և կ'աւանդուի թէ՝ մագաղաթեայ կարեւոր գրքերու վերայէ այլ և այլ երփներանգ նկարներ մկրտուլ հանած է, հիւրընկալ կամ դարպասընկալ վարդապետաց և միաբանից վստահութիւնը չարչացար գործածելով:

Կը յիշատակուի ցարդ յԱնապատսթէ, Լմոյ Ս. Գէորգայ և Կոռուցի Ս. Կարապետի տաճարաց մէջ Հ. Միքայէլ Ս. Պատարագ մատուցած է անխառն բաժակաւ, ըստ ծիսի Հայոցատանեաց Առաքելաւանդ Ս. Եկեղեցւոյ:

Նոյնպէս, ի Հայաբնակո՞ Հ. Ներսէս Ստրգմեան և Հ. Կղեմէս Սիակիլեան (1), իրենց ուղեւորութեանց միջոցին, անխառն բաժակաւ պատարագած են:

* * *

1835ին տպուած ինձիմեան Հ. Դուկասին աշխարհագրական Հնախօսութիւնն երբ շրջաբերութեան հանուած է, ուսումնասէր ընթերցովք զարմացած են թէ՝ ի՞նչպէս Հայր ինձիմեան բնադրաւուն մեկուսացեալ ապրելով՝ այսչափ խորին ու մանրամասնօրէն ուսումնասիրած է ոչ միայն բնագուառութիւնն, այլ և այդ երկրին Դիրքը, Տարածութիւնը, Օդը, Լեռները, Գետերը, Բներքերը, Վաճառականութիւնը, Բնակչիները, Բազմումարդութիւնը և Սակաւամարդութիւնը, Անցքը և Պատմութիւնը, Կառավարութիւնը, Սովորութիւնները, Բարքը, Լեզուն, Դպրութիւնը, Արուեստները, Կրօնը, Եպիսկոպոսարանները, Երկրին Բաժանումը, Աշխարհագիրը, և այլն:

Շատ չացնիր, կը լուծուի այդ հանելուկն ալ:

Գէորգ-Դպրի քեռորդի՝ Տ. Մարտիրոս քահանայի որդին՝ Քալէմքեար Անտոն, երբ Փիշմիշեան Միքայէլ Ամիրային վաղամեռիկ աղջկան համար՝ եղեկեան Յովհաննէս Պատուելոյն յօրինած տապանագիրը կը գեղագրէր, իւսկիւտարու Ճեմարանի արդիւնաւոր և պերճախօս վերատեսուչ՝ Մանուկլեան Յակոբիկ աղան ալ Հ. Դուկաս ինձիմեանի յիշեալ նորատիւ Աշխարհագրական Հնախօսութիւնը բարձրացայն կ'ընթեռնուր յափափելով:

Քալէմքեար Անտոն, թէև առաջա-

(1) Յայու ողբացեալ Հ. Սիակիլեանի դրամագիտութեան մի նոր երկն՝ Պատառութիւն դրամոց անունով՝ հատարակուեցաւ մօտերս ի Վիկնաս :

Սոյն գրքին կցուած են հեղինակին կենսագրութիւնը և լուսանկարը և գըտամոց պատկերները:

Դրեալ գործովն զբաղած, բայց ետին գառնալով՝ կը պատմէ հարցասիրաց թէ, « Ասո՞նք, (այսինքն, Հնախօսութեան մէջ պարունակեալ հետաքրքրական նիւթերն) մօրեղբօրս (Գէորգ-Դպրի) գրածներն են, հին ու պատմական վանքերէն ու հայրենակ գաւառներէն հաւաքած բերած տեղեկութիւններն են, որոնք չուանի վերայ շարուած կտոր կտոր թղթերու վերայ գրուած էին գրաբառ. ինքը կը կարդար զանոնք, ես ալ տեսրակ տեսրակ կը գըրէիր, ու բնագրին վրայէն գիծ մը քաշլով՝ մէկ կողմէ կը նետէր :

Դիսնեսիոս եպիսկոպոսին (1) շինած Նոր-Կոտակարանի Համարարառան ալ Մայր Եկեղեցւոյ ուսումնարանի թանգարանէն անյայտանալէ յետոյ, բողոքականները՝ 1848ին իրեւ իրենց սեպահականութիւնն չը հրատարակեցին՝ Յառաջարանին մէջ ծախս առած գրաբետ Ամիրային տունը գագած է, հրատարակել տալու համար:

Թէ Ալի-Արթին կը յաւելու թէ, յիշեալ Օսմանեան Պատմութիւնը՝ կարդալով կարդապով էզպէր ըրած էր:

Իշեւ ետքը՝ այս Օսմանեան պատմութիւնն ալ կը համբանայ:

Գէորգ-Դպրին Օսմանեան պատմութիւնը՝ կերպի իւիք վկայութիւն մէ Գէորգ-Դպրէն օգտուելուն, ինչպէս վերոյիշեալ Հայ անուանց յատուկ ցանկին մէջ ալ արդէն շեշտած էր անունն:

Կը հաւատամք թէ, ինչպէս Գէորգ-

Դպրին, նոյնպէս Հ. Այվազովսկին ալ

անձանօթ չէին Թարիխի Ա. Ընդ Փաս-

ական, Ճիմաննիւման, Հեր Պիմիքը,

Թիւկիյէտանին Ճէմալի, պատմագիր Ա-

լիի Թարիխի Ալի Օսման Երկերը, և այլ

տաճիկ պատմաբանից գործերը:

Գիտեմք որ Հ. Գարբիէլ Այվազ-

ովսկի գիտնական, լեզուագիտ և բազ-

մահմուտ մի անձ էր, և Օսմանեան

Պատմութեան սոյն երկհատորն երկա-

սիրած ատեն ոչ միայն Հայ հեղինակ-

ներէ առաջնորդուած է, այլ և կը յսու-

ովվանի որ իրեն հաւատարիմ առաջ-

նորդ ընտրած է քաջակմուտ Համեր

Փուրիսթալ Գերմանացին, որ 30 երկար

տարիներ աշխատած է Օսմանեան բազ-

մահատոր պատմութիւնը գրելու հա-

մար՝ Երկերիւրի չափ Տաճիկ պատմա-

բանից աղբիւրներէ քաղուածնլ:

Հարկ կը համբարիմ այս առթիւ յի-

շել թէ, Պետական Խորհրդոյ անդամ

ինքնին՝ յակն արկանել ստէպ ոչ միայն յայլոց Եւրոպացի մատենագրացն բանս, զոր օրինակ ի Մուրատմա, ի Քանթէմիր, ի Թոթ, ի Թոտէրինի, յԱլիքս, ի Ժուանէն և յայլս, այլ և կարեւորն էր մեզ, և քաջին Համբէրայ ևս արդեօք ըզանի, մեծապէս սատարութիւն գլուխագիր ի բազում ինչ իրս և ի մերոցն պատմաբանից, և մանաւանդ ի Ժամանակակից մարդկանէն, որպիսիք են Թովմա վարդապետ Մեծոփայ, Առաքել վարդապետ Դարգիմագիր, Զաքարիա Վաղարշապատեցի, Երէմիա Զէլէպի, Մաղարչապատեցի, Երէմիա Զէլէպի, Մաղարչապատեցի, Դէկանիրանէնան, Գէորգ Դպրի Պալիր Ճէկվահիրանէնան, Գէորգ Դպրի Պալիր Պալատեցւոյ, Գէորգ Օղուլուգեան Տրափիզոնցի, և յայլոց ոչ սակաւ յիշատակարանաց և ի թղթոց ականատես և ականջալուր պատմագրաց : »

Նոյնպէս, Հ. Այվազովսկի, նոյն հեղինակութեան հրատարակութեան առթիւ, Օսմանեան պատմագրութեան գրչագագած յիշատակարանաց յիշատակարանաց և ականջալուր պատմագրաց : »

« Թարիխի Ալի Օսման, յօրինեալ ի Հասանպէկապատէ պատմագրէ . ոս մինչեւ ցթագաւորութիւն Սիւլէյմանայ արքայի համառօտէ զՍատէտին, և յարէ զիւրոյ ժամանակին զդէպս մինչեւ ցամի Խէջ յորում և մեռաւ : Զայս պատմութիւն թարգմանեալ Գէորգայ դպրի Պալատեցւոյ, և յայլոց ոմանց ոմանց պատմութիւնն անցից աշխարհին յամէ 1722 ցամի 1728 տպագրեալ ի 1741 : »

Սոյն հրատարակային խստովանութիւնը՝ կերպի իւիք վկայութիւն մէ Գէորգ-Դպրէն օգտուելուն, ինչպէս վերոյիշեալ Հայ անուանց յատուկ ցանկին մէջ ալ արդէն շեշտած էր անունն:

Կը հաւատամք թէ, ինչպէս Գէորգ-Դպրին, նոյնպէս Հ. Այվազովսկին ալ անձանօթ չէին Թարիխի Ա. Ընդ Փասական, Ճիմաննիւման, Հեր Պիմիքը, Թաճ-իւր-բէկարիլս, Լուդֆի փաշայի, Միւկիյէտանին Ճէմալի, պատմագիր Ալի Թարիխի Ալի Օսման Երկերը, և այլ տաճիկ պատմաբանից գործերը :

Գիտեմք որ Հ. Գարբիէլ Այվազովսկի գիտնական, լեզուագիտ և բազմահմուտ մի անձ էր, և Օսմանեան Պատմութեան սոյն երկհատորն երկասիրած ատեն ոչ միայն Հայ հեղինակներէ առաջնորդուած է, այլ և կը յսուովվանի որ իրեն հաւատարիմ առաջնորդ ընտրած է քաջակմուտ Համեր Փուրիսթալ Գերմանացին, որ 30 երկար տարիներ աշխատած է Օսմանեան բազմահատոր, պատմութիւնը գրելու համար՝ Երկերիւրի չափ Տաճիկ պատմաբանից աղբիւրներէ քաղուածնլ:

Հարկ կը համբարիմ այս առթիւ յիշել թէ, Պետական Խորհրդոյ անդամ

(1) Սոյն արդիւնաւոր և լեզուագիտէտ եպիսկոպոսն ալ, որ բնիկ Պալատցի է, մեր յատուկ ուսումնատիրութեան անուագիտական Յակոբի աղջկաց լինելով, ի մօտոյ պիտի հրատարակեմք Նորին. Վարդապրութիւնը :

Ապրօ Սահակ է Փէնտի ալ շուրջ 20 տարի կ'ընէ, որ Օսմանեան ընդարձակ պատմութեան մը յօրինման ձեռնարկած է, տպեալ և գրչագիր գրեթէ բոլոր պատմական գործեր աչքէ անցնելով, և մինչեւ իսկ եւրոպական կայսերական մատենադարանաց մէջ առայն երկար բարակ խուզարկութիւններ կատարելով:

* * *

Գէորգ-Դալիր՝ իւր ծերութեան վերջին օրերը բոլորովին փիլիսոփայութեան և մենասիրութեան տուած էր ինքզինքն, առանձնացած էր, ինչպէս ըսինք, Ս. Հրեշտակապէտ եկեղեցւոյ մի խցիլին մէջ, Կերակուրն անդամ ինք կ'եփէր:

Նախասիրական ճաշն էր՝ պատիճանը (բաթլիճան), որոյ երեսուն եւ վեց տեսակները կրնան պատրաստուիլ իրրեւ կերակուր, սակայն Գէորգ-Դալիր սիրածն ու շինածն՝ ո՛չ բարիխան պէօրէկին էր, ո՛չ Հիմնեար-պէյէնտին, այլ փուռը տրուած՝ պարզունակ խորովածը, վրան աղ-պըզ-պեղ ցանուած։ Շատ անդամ ձեռօքն՝ եկեղեցւոյ մօտը գտնուած փուռը կը տանէր պատիճանը և եփել տալովանդ, վերարկուին տակն առած՝ իւր խուցը կը վերադառնար ու կ'ուտէր, երբեմն հրաւիրելով իւր մօտն՝ քեռայրը՝ Պալատու Տէր-Մարտիրոս քահանայն, որ այն ատեններ՝ այրիացեալ գոլով, այլ եւս եկեղեցւոյ խուցերէն մին կը բնակէր, և սենեկակից էր աներձագին՝ Գէորգ-Դալիրն։

1812ին, երբ Պատուելին կը հիւանդանայ և վիճակը մերձ ի մահ կը ծանրանայ, բարեկամները չորս կողմը կը շրջապատեն, աւաղելով կը հարցափրեն թէ՝ Ազգին գրական մեծ գործ մը (1) է՞ր չթողուր՝ իւր անունովը, այդչափ գիտնականութեամբն ու Ենցուագիտութեամբը հանդերձ։

Առ այս Գէորգ-Դալիր կը պատասխանէ թէ՝ «Վենետիկոյ վանքէն հետզհետէ տպուելիք ո՛ր գրութեան կամ հեղինակութեան ճակատը ի ԹՈՒԱԿԱՆԻ Հիմքին բառերը գրուած տեսնէք, գիտցած լինիք, որ անիկա՝ իմ գրկած ձեռագիրս է, իմ հեղինակութիւնս է։ իմ քովս միայն Պարսկերէն Բառագիրը մը կայ, զոր՝ յետ մահուանս՝ փնտուելով պիտի գտնէք, և զոր Պատղազ Ամիրայն հրատարակել ալ պիտի տպագրութեան արժանացած էն։

Եւ սովա՝ իւր քեռայր՝ Տէր-Մարտիրոսուն կոչելով առ ինքն, կտակ կը թէ,

«Երբ մեռնիմ, սա՛ սէքէր սնուուկը

(1) Գէտք է յիշել թէ՝ Պարսկահայ Բառարանն տակաւին ի լոյս ընծայուած չէր յայնժամ։

տա՛ր Սեղբոս-խանը, և Վենետիկցւոց յանձնէ՛, որովհետեւ երբ հո՛ս տեղ մը-նալու լինի, մէջի եղածներուն բոլորն ալ կ'ոչնչանայ, կը փանուայ։

* * *

Պատուելի Գէորգ, իրօք ալ՝ շատ չապրիր, կը մեռնի։ Տէր-Մարտիրոս՝ ինքզինքը միակ ժառանգորդ և կտակատար կարծելով, Գէորգ-Դալիր թողուցած 25,000 զրշ ոսկի դրամոց և թանկագին ձեռագիրներուն ու գրեթերուն կը տիրանայ, Գէորգ-Դալիր ձեռագիրներն՝ ի Վենետիկի կը թոցնէ, ուր 1873ին այցելած ժամանակ Գէորգ-Դալիր մօտիկ ազգականներէն՝ Հիւնգեարագէյնտեան Տէր-Յովհաննէս Աւագ-քահանայն, լսած լինելով արդէն ժամանակակիցներէն, աչքովն ևս կը տեսնէ ու կը շօշափէ անդ Գէորգ-Պալիր մօտակ ազգականներէն։ Հիւնգեարագէյնտեան մատենները ու անձնական գրքերը։

Անդրիանուալուսեցի Մեծ-Պօլոս Պատրիարքը (1), երբ կը լսէ որ հանգուցեալ Գէորգ-Պատուելոյն գրութիւններն Վենետիկցւոց յանձնուեր են Տէր-Մարտիրոս քահանայի ձեռամբ, իսկոյն զիշեալ եկեղեցականին մօրուքը կ'ածիկ և կարգալոյն կը հրատարակէ, այդպիսի գրական և դրական ամբարշտութիւն մը գործած լինելուն համար։

Ապա, կը լսուի որ՝ Տէր-Մարտիրոս կարգազուրկ քահանայն կաթողիկ գարձեր կամ թրանկացեր ու վերադարձեր է։

* * *

(1) Անդրիանուալուսեցի Պօլոս Պատրիարք Ս. Երուսաղիմայ միարան է, ունի կրկին երկամբութիւններ՝ 1. ԹԱՂՖԱՐՍՍ ԽՐԱՏՈՒ. — 2. ԶԱՆԱՋԱՆԻԹԻԻՆ ՀԻՆԴ ԴԱՐՈՒՅՑ :

Առաջին գործը՝ երկու հատորի բաժնուած է որ կը սահմանէ թէ «յաւաշնումն ցուցանի օգուտոն առաքինութեանց ինչ, որք առնեն զմարդն երջանիկ։ իսկ յերկրորդումն վիսան մուլութեանց՝ որք առնեն զմարդն թըշուառ, ևս և հարկաւոր միջնորդք փրկութեան ճշմարիտ գրիստաննէի»։

Իսկ ԶԱՆԱՋԱՆԻԹԻԻՆԸ է պատմութիւն հին և նոր կտակարանաց։

Սոյն երկու երկամբութիւնը ալ կրկնակի տպագրութեան արժանացած էն։

Մեծ-Պօլոս Պատրիարք՝ բառին ընդարձակ նշանակութեամբը մեծ-Պատրիարքը է, վկայեալ նոյն իսկ ժամանակին ափրու Սուլթանէն, և մեծամեծ անձնութիւններէն։

Պօլոս Պատրիարք՝ Քիւրիւկ (Մեծ Տումար) մը հաստատած է ի Պատրիարքարան, ուր արձանագրուած կան, ժամանակակից ազգային գէպերն ու Պատրիարքարանի գործառնութիւններըն, ինչպէս նաև Պատրիարքարան յաշորդութեան գաւազագիրներ։

Երանի՛ թէ, այս Քիւրիւկի նման

Գէորգ-Դալիր՝ միշտ իշխանավայել ապրելով, 80 տարիներ առաջ կը մեռնի այսպէս, 25000 զուրուշի մեծկակ գումար մը թողլով։

Եւ սակայն, այսչափ հարստութիւն ձգելէ յետոյ, գարձեալ ազգն՝ մեծ չքոյ և հանդիսիւ կը կատարէ յուղարկաւութիւնն Գէորգ-Դալիր որ կը թաղում էաիրնէ-Պարուի գերեզմանատան՝ Եյուպ նայող կողմի եզերքին վրայ։

Թաղմանէն քանի մը տարի անցնելէ յետոյ՝ Գէզնեան Յարութիւն Ամիրայ փառակերա գարմարան մը կանգնել տուած է ի հուսկ պատիւ ժամանակակից բազմիմաստ պատուելոյն, տապանագիրն յատկապէս պատրաստել տալով՝ Փիլմիշեանց գերգատասանին և այլ մեծամեծաց տապանագիրն ճոխ դրամանութիւն մասնու կը այցելով յօրինող մասնագէտ եղեկեան Յովհաննէսին (1), և ոչ Փէշտըման մատենագիրն յատկապէս պատուելոյն, ինչպէս կը կարծեն ուսանք։

Քիւրիւկներ ամեն տեղ ալ կանուխէ հաստատուին։

Լսած ու ստուգած եմ թէ, կուտինայի Սոաշնորդարանին մէջ 700 տարիներէ աւելի հնութիւն ունեցող Քիւրիւկն մը կայ, յորում արձանագրուած է ամեն ինչ, յիշուած է նաև որ Պրուսայու Առաջնորդ ու կ. Պօլոյ առաջին Պատրիարքը Յովհանիմ Արքեպիսկոպոսն՝ բուլուն կուտինայու Առաջնորդն է եղած, և ոչ թէ միայն Պրուսայու, որ թերևս հին ատեն՝ յարակից փոքրիկ վիճակամբ սական իրրեւ առաջնորդական թեմագլուխուն նախապատիւ գաղաք համարուէր, իրրեւ սկզբնագահ մայրագաղաք Օսմանեան մեծ ազօր Տէրութեան։

Երկու Քիւրիւկներ ալ ի Պրուսա տեսած եմ, մին Սամուէլ Եպիսկոպոսի առաջնորդութեան օրով հաստատուած, միւսը՝ Պարագօչ երջանկայիշատակ Պօլոս Սրբեպիտուկապոսին, անմոռաց Հիմնադրին Սրբաշու Դարեվանուց։

Նոյնպէս, Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ ալ հին Քիւրիւկ մը կայ եղեր, յորում զետեղուած են, Յովհակիմ Ս. Պատրիարքին վերաբերեալ տեղեկութիւնք, և Ֆէթիհ Սուլթան մէտէ տրուած Պատրիարքական իշխանութեան կայսերական, հրավարական և Սամաթիոյ Տէր Մարտիրոսուն Յ. Կոմիտաս աւագերէց քահանաց։

Սոյն պատմական թանկագիրն Քիւրիւկն Տէր Մարտեան Աւագ-քահանայն հանգ. Սիստանի Պատրիարքական կայսերական, հրավարական և Սամաթիոյ Տէր Մարտիրոսուն Յ. Կոմիտաս աւագերէց քահանաց։

Պատմական հինաւուրց Քիւրիւկ մ'ալ Տաթէնու վանքին մէջ գտնուիլը կը յիշեմ։

(1) Եղեկեան Յովհաննէս՝ Հայովմէտի կայսար է յիշել թէ՝ Պատրիարքական մատենական ի լոյս ընծայուած։

Գէորգ-Դպրին հիմնապէս քանի՞ կամ ի՞նչ լեզուներ գիտնալն՝ տապանագրին մէջ զետեղուած է:

Շուրջ երկու տարիներ կը փորձուէիք և կը փափաքէինք լրիւ գաղափարել Գէորգ-Դպրի տապանագրին օրինակն Ռւնէինք առ ձեռն անոր սկզբնատողերն ու վերջատողերն, սակայն այդ ուղղ տողերով բնականապէս չէինք գոհանար, այլ կուզէինք ամբողջն ունենալ, որպէս զի կենուագիրն լրացուցած համարիմք:

Վերջապէս, չնորհակալ եմք իւթիւնեան կարապետ է ֆէնտիէն, որ բարեհաճած էր պատանեկութեան ժամանակին, այսինքն, կէս և աւելի գար առաջ էտիրնէ-Գաբուի գերեզմանատիրն՝ գրեթէ ոչինչ տարբերութեամբ յիշելով՝ ի գիր առնել ու մեզ յանձնել:

Իսկ երիցս չնորհակալութիւն Տօքթ. Թորգոմեան Վահրամ է ֆէնտիի, որ յատկապէս էտիրնէ-Գաբուի գերեզմանատունը երթուլով և տապանագիրն օրինակելով՝ պատճէնն համեցաւ անհախտածար ինձ հաղորդել, որոյ օրինակն աստ կ'արտագրեմ:

Ե

ՄԱՀԱՐՁԱՆ

ՊԱԼԱՏՅԻ ՏԻՐԱՅԱԿ ԴԷՌՈՒ
ՊԱՏՈԽԵԼԻ ՏՐ. ՅՈԶՈՆՆԻՑԽԵՍԽ

Յամի Տն. 1812

Է՞ր դաւնահամբոյր ձայն ելերգուաց Պատէ շխռուքեամբ՝ զզգաւ դամբանաց: Է՞ր երկնահանդէս մարզայք դպրուքեանց շեծեն վետանար յաւերակս հայկեանց: Զի ալօսանայ պարձանեն հայրենեաց Եւ հետախաղաղ գաղի ուր հայսնեաց: Մաղկլնէկէց քօնի բոյսը բարեզգեաց, Յոր ջահ Հիմենին ազդել ո՞չ զօրեաց: Նոր հանդիսարանն ինին յիշատակաց Շենդ բակարան բազմազան լիզուաց: Մարգմանիչ տալից Երայականաց, Նոյն Արաբացւց, Պարսից Եւ Յունաց: Այն որ խոյացաւ՝ յերեր լուսարձար Երող ի մըքան զիւր կոյս ոսկերաց: Այն որ արժանի յաւերծ սարդենեաց Աչ գոյր շինուալ յաւերծ կամ կանգնեաց: Այս որ խոյացաւ՝ յերեր լուսարձար Երող ի մըքան զիւր կոյս ոսկերաց:

Վախնանեցաւ 75 ամաց ի թուին Հայոց ՌՄԿԱ. (1260)

Գէորգ-Դպրի գաղափարան՝ երկայն քառակուսի քար մ'է, իմաւաւոր պատուանդանով և 4 ½ մեդը երկայնութեամբ:

Այժմ տապանագարն բորբոսացեր և գրերն անթեռնլի վիճակի մը ենթարկուած են:

Տօքթ. Թորգոմեան՝ տապանագիրն օրինակած օրը տեսնելով գերեզմանին այն ողբակի վիճակը, կը տրամադրուի նորոգել տալ զայն:

* * *

Փափաքէլի չէ՞ր ունենալ մեր գըրատանց կամ գրասենեկաց մէջ եթէ ոչ Գէորգ-Դպրի կիսարձանն, գէթ պատկերն:

Պէզմէան Յարութիւն Ամիրայն այս պէտքն ևս զգացեր, ու ոչ միայն Գէորգ-Դպրի գամբարանը շինել տալով, և Ընդարձակիր բառագիրքը տպել տալով բաւականացեր է, այլ և իրեւ յիշակերտ կամ յուշարձան մը Պալատեցւոյն փառքը մշտնջենաւորելու, բարեհաճած է շինել տալ նաև Գէորգ-Դպրի մեծագիր պատկերն, որ կ'ըսուի թէ՝ կամ Վենետիկոյ Ս. Ղազարու վանուց մէջ, և կամ Տիրզեանց գերդաստանին քով կը պահուի այժմ:

Մասիս Արտօնատէր Պալատցի Մեծ, իւթիւնեան կարապետ է Փ., որ Գէորգ-Դպրի արժանիքը գնահատողներէն ու անոր տապանագիրն ի մանկութենէ բերնուց սերտողներէն է, արդե՛օք օր մը մոքէն անցո՞ւց կամ կ'անցնէ՞ որ, իւր թաղեցիներն ու Մասիսներովը ու աջնորդուած նորելուկ գրագէտներն համոզելով՝ երթան Գէորգ-Դպրի գերեզմանին վրայ, գէթ տարին միանգամ Ս. Գէորգայ տօնախմբութեան օրը, Հրեշտակապետ եկեղեցւոյն մէջ նորահոգւոյն համար հանդիսաւոր Ս. Պատուագ մատուցանել տան և հոգեհանգիստ կատարեն. և կամ, էտիրնէ Գարուի գերեզմանատունը յուղարկաւոր գնացողները՝ կը յիշէ՞ն, որ գերեզմանատան մէկ խորչը՝ 100 տարիներ առաջ Գէորգ-Դպրի մը եկած հանգչած է, որոյ գերեզմանական վիմը՝ ոչ միայն Պալատցի ազգայնոց համար, այլ ընդհանուր՝ գըրագիտաց և լեզուագիտաց համար պէտք է հանգստեան-վէմն նկատուի, և զինքն այցելուներէն քաղէ սրտագին Հայր-մեր մը և Աստուած ողորմի մը:

Բնաւ երեք մտածած ունի՞ն Պալատու քահանայք այս պարագայն, կամ ի կիր առաջ են:

Ա. Յ. ԱՅՎԱԶՅԵՍՆ

Հէնրիի Պէստալոցցիի կէնչսրդ եի գէրմանի անուն վէպը, թարգմանութիւն Գեր. Խորէն Ս. վարդ. Սաեկանակ է կ լըս ընծայուած է Պալտատեան տապարանէն: Գին 4 զրշ. Հասոյթը նըուիրուած է Այնթասլի Վարդանեան վարժարանին:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ս. Պատրիարքը տակաւին ապաքինած չլինելով, Պատրիարքարանի գործակատար Գրէնկեան Արքահամ է Գէն. տին երեկի կայսու պալատ երթալով, ներկայացաւ առաջին սենեկապետ Վանմ. Համի Ալի պէյի և ինդրեց որ Ն. Սըրբացնութեան չնորհաւորութիւնները հաճի մատուցանելյաս կայս. գահայից, և բարեւմագթութիւնները ըրաւ վասն կենաց վեհ. Սուլթանին: Արքահամ է Փ. այցելեց նուև Վանմ. Սիւրէյա վաշայի, Վեհ. Սուլթանին մատանապետ Վանմ. Օման պէյի և նախարարաց:

— Կրօն. ժողովն արտօնեց՝ Սեբաստիոն Պազըմ Մաղարա գիւղին եկեղեցւոյն համար ներկայացուած Ս. Ասուածածնայ, Խաչելութեան և Մկըրտութեան պատկերներու օծումը:

— Արզմանեան Տ. Ստեփան վարդապետ միամեայ ապաշխարութեան համար կեսարից վանքը դրկաւած էր: Այս պայմանաժամ լրացած լինելով, կըրոն. Ժողովն արտօնեց վարդանց պատկերներու օծումը:

— Արժ. Գիւտ քահանայի և Պատմութիւն Սիմէօն կաթողիկոսի անուն աշխատասիրութիւնը իզմիրեանց կտակի Յանձնատուած եւ այս վերջնոյն կողմանէ ի քննութիւն յանձնուած էր Գեր. Մատթէոս եպիս. իզմիրեանի, որ իւր տուած տեղեկագրոյն մէջ մրցանակի արժանի դատածէր այդ աշխատասիրութիւնը: Յանձնատուողը Պիւտ քահանային տալ որոշեր է 30 օմա. ոոկի:

Նոյն Յանձնատուողոյն մատուցուած էր նաեւ Հ. Մեսրոպ վարդապետ Ռւզուրէանի մէկ աշխատասիրութիւնը, «Պատմութիւն կէհասաանի Հայ գաղթականութեան»: Այս աշխատատօթիւն ի քննութիւն յանձնուած էր Ամեն. Մելքիսեդէկ եպիս. Մուրատեանի որ իւր տեղեկագրոյն մէջ մրցանակի արժանի չէ դատած զայն:

— Կրթական նախարարութիւնը բոլոր ազդ. վարդապետնուաց վիճակագիրըն ուղած լինելով, Ազգ. Պատրիարքարանի գահական է կ լըս ընծայուած է Ամենա ծեռակած գահական տեղուած է:

— Նորակազմ Ռւսութիւնական Խորհուրդն չորեքշաբթի օր գումարուելով, գիէթթէսս է Փ. Պէրլէրեան Ատենապետ և զՊօղս է Փ. Քէրէստէնեան Սաենադպակիր ընտրելէ յետոյ, ի մէջ այլոց հետեւակ տնօրինութիւններն ըրաւ:

Քաղաք. Ժողովն, ըստ առաջարկութեան Ռուսութիւն. Խորհուրդոյ, ընտիր գաղափարեանց հեղինակները քաջալերելու նպատակաւ 50 ոսկեոյ գումար մը սահ-

մանած լինելով, Խորհուրդն իւր Ատենապետին յանձնեց առ այս կանոնական ծրագիր մը պատրաստել — Խորհուրդը նկատողութեան տուաւ նաև Ռւսուցական ժողովոյ մասնախմբին կողմանէ ներկայացեալ տեղեկագիրն, որ ինչ ինչ իշման ու տուաջարկութիւններ կը պարունակէր, և որոշեց օրակարգն անցունել զայն : — Ռւսումն . Խորհուրդն ասէ առաջ որոշած էր որ մէն մի գաւառի կամ կրթական շրջանակի Ռւսումն . Խորհուրդը ամէն տարի քննութեանց եղանակին (յունիս 15—յուլիս 1) կազմեն երկու քննիչ մարմիններ, մին՝ Նախակրթարանի շրջանակի և միւսն՝ Ռւսումնատրանական շրջանակի ընթացաւարտից համար և նոցա միջոցաւ կատարեն շրջանակին մէջ գտնուած բոլոր գպրոցաց ընթացաւարտներու քննութիւնն և անոնց վկայականաց բաշխման հանդէսն հաւաքաբար կատարեն տեղւոյն Մայր Եկեղեցւոյն մէջ, ի մայրաքաղաքիս՝ Ս. Պատրիարք Հօր և ի գաւառո՝ Գեր . Առաջնորդաց նախագահութեան ներքեւ : Խորհուրդն որոշեց ինդրել Վարչութենէն որ հաճի փութացնել այս մասին իւր ընելիք տը-նօրինութիւնն :

— Կէտիկ Փաշայի քահանայներէն Տ. Ղեւոնդ Մարուքէ ետն ի Տէր հանդեալ ի հասակի 39 ամաց : Օծան և յուղարկութեան հանդէսը կատարուեցաւ կիւրակէ օր և մարմինը փոխագրուելով ամիսիուեցաւ էտիրնէ գաբուի գերեզմանատունը :

— Մայր Եկեղեցւոյ Պէջեան և Լուսաւորչեան վարժարանաց տարեկան քննութիւննը պիտի սկսին յառաջիկայ յուլիս 1 չորեքշաբթի օր և տեսն մինչև 11 յուլիս շաբաթ :

— Գումգագուլի Դարրոցասէր Տիկնանց Ընկերութեան վարժարանին ԺԲ. տարեշրջանի քննութիւննը պիտի կատարուին յունիս 29 երկուշաբթիէն մինչեւ յուլիս 3 ուրբաթ օր, առաւօտոները ժամը 9 տ 12 և միջօրէէն յետոյ 25 ն 5 (լ. ե.) :

— Գումգագուլի Միրիմանեան Լեզուարանական վարժարանին է . տարւոյ ամավերջի հարցաքննութիւննը սկսան երէկ և պիտի տեւեն մինչեւ յուլիս 2 հինգշաբթի :

— Վաղն առաւօտ, էյուպի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ տօնախմբութեան առթիւ, նոյն Եկեղեցւոյ մէջ հանդերձեալ է Ս. Պատարագ մատուցանել՝ Զալաթիոյ Քարոզիչ Գեր . Տ. Վահան Մ. Վ. Յակոբեան :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Գերմանիոյ Կայսրը Խորվեկիոյ կրտսային կողմերը ծովային պայտ մը կը կատարէ :

— Ռումանիոյ Կարոլ թագաւորը Բարիզէն Պելճիս գնաց շաբթուս :

— Լոնտոնի մէջ 2500ի չափ անձինք կարմիրախոտէ և կեղծմաշկէ բանուեր են :

